ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

МИНИСТР ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

«01» 11 2017թ.
ԴՆ/510-1537

ՀՀ արտաքին գործերի նախարար
**Է.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան

Ի պատասխան Ձեր 27.10.2017թ. N 1111/11625 գրության Ձեզ եմ ուղարկում «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ ՀՀ ՊՆ տեղեկանքը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

**Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ.՝ Ս.Օ.Աբրահամյան
հեռ. 010294521

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 44 39, ՖԱՔՍ՝ (+374 10) 66 32 34, ԷԼ.ՓՈՍՏ՝ minister@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ.: (+374 10) 29 44 39, ФАКС: (+374 10) 66 32 34, ЭЛ.ПОЧТА: minister@mil.am

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի վավերացման նպատակահարմարության վերաբերյալ**

Ներկայացվող Համաձայնագիրն ստորագրվել է Երևանում 2017թ. հոկտեմբերի 24-ին: Համաձայնագիրը ստորագրելուն նախապատրաստել են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ֆինանսների նախարարությունները: Համաձայնագրի կողմերը հանդիսանում են՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը:

Համաձայնագիրը կնքվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին» 2003թ. հունվարի 17-ի համաձայնագրի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև ռազմատեխնիկական համագործակցության զարգացման մասին» 2013թ. հունիսի 25-ի պայմանագրի իրականացման նպատակով:

Ռուսական կողմը Հայկական կողմին տրամադրում է մինչև 100 մլն. ԱՄՆ դոլար գումարի չափով պետական արտահանման վարկ ռուսական արտադրության ռազմական նշանակության արտադրանքի մատակարարումների ֆինանսավորման համար՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածում նշված ցանկի: Հավելված N 1-ը նախապատրաստվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Ռուսաստանի Դաշնության ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության կողմից, որտեղ հաշվի է առվել 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի վերլուծությունները: Ցանկը կարող է փոփոխվել Հայաստանի

Հանրապետության պաշտպանության նախարարության և Ռուսաստանի Դաշնության Ռազմատեխնիկական համագործակցության դաշնային ծառայության փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Վարկի գծով պարտքի հաշվառումը կատարվում է ԱՄՆ դոլարով:

Պետական արտահանման վարկի տրամադրումը նախատեսված է 5 տարվա համար՝ 2018-2022: Հայաստանի Հանրապետությանը պետական արտահանման վարկը տրվել է 3 տոկոս տոկոսադրույքով:

Հայկական կողմը պետական արտահանման վարկն օգտագործում է ԱՄՆ դոլարով հաշվարկված արտադրանքի մատակարարման վերաբերյալ պայմանագրերից յուրաքանչյուրի արժեքի մինչև 90 տոկոսի ֆինանսավորման համար, որոնք կնքվելու են սույն Համաձայնագրի 8-րդ հոդվածին համապատասխան հաստատված՝ պայմանագրերում նշված հայկական և ռուսական կազմակերպությունների միջև, ինչպես նաև մնացած 10 տոկոսը Հայաստանի Հանրապետությունը վճարելու է սեփական միջոցներից:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Ռուսաստանի Դաշնության «Ռոսօբոռոնէքսպորտ» ԲԸ-ի միջև արդեն իսկ նախաստորագրվել են երեք պայմանագրեր, որը ծածկում է վարկով նախատեսված ամբողջ գումարը:

Հայկական կողմը պետական արտահանման վարկի փաստացի օգտագործված գումարը մարում է 15 տարվա ընթացքում, յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին, ընդ որում վարկի մարման առաջին վճարումը կատարվում է 2023թ. մայիսի 15-ին՝ սույն Համաձայնագրի N 2 հավելվածում սահմանված ժամանակացույցին համապատասխան:

Ռազմական նշանակության արտադրանքը, որը գնվելու է նշյալ համաձայնագրով ամբողջովին նոր է, և նշանակալի կամրապնդի Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը, ինչը իր հերթին կհանգեցնի Հայաստանի Հանրապետության անվտանգության բարելավմանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանը պետական արտահանման վարկ տրամադրելու մասին» համաձայնագրի վավերացումը:

ՀՀ պաշտպանության նախարար

**Վ.ՍԱՐԳՍՅԱՆ**